



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆՈՒՄ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԿ



GANTEGH

BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MOTRÉAL

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ, 27 Սեպտեմբեր 2020

182

DIMANCHE, 27 Septembre 2020



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Գ Կիրակի Ձկնի Սրբոյ Խաչին
Տօն ՎԱՐԱԳԱՅ ՍՐԲՈՅ ԽԱՉԻՆ

**3^{ÈME} DIMANCHE APRÈS LA SAINTE CROIX
FÊTE DE LA SAINTE CROIX DE VARAK**

Աստուածաշունչի Ընթերցումներ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ
ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ (6.14-18)
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ (24.30-36)

Les lectures de la Bible d'aujourd'hui

GALATES 6.14-18
MATTHIEU 24.30-36

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Հոգեւոր Հովիւ

Célébration et l'Homélie
RÉV. PÈRE DAVID MARGARYAN
Prêtre Paroissial

Առաւօտեան ժամերգութիւն -	9:30-ին
Office Matines à	9h30
Ս. Պատարագ- ուղիղ սփռում -	10:30-ին
La Sainte Messe – En direct à	10h30
Հոգեհանգիստ ժամը - ուղիղ սփռում	12:00-ին
Requiem - En direct à	12h00

DIACRES – ACOLYTES

Organiste: Mme Houry Bedrossian
Chœur "Gomidas"

ԿՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

**LES LECTURES
DE DIMANCHE**



**THE SUNDAY
READINGS**

ՉԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ 6.14-18

14 Բայց ես ամենեւին պիտի չպարծենամ, այլ միայն մեր Տէրոջ՝ Յիսուս Բրիստոսի խաչով. անով աշխարհը խաչուած է ինծի համար, ես ալ՝ աշխարհի: 15 Որովհետեւ Բրիստոս Յիսուսով ո՛չ թլփատուութիւնը որեւէ ազդեցութիւն ունի, ո՛չ անթլփատութիւնը, հապա՛ նոր արարած ըլլալը: 16 Խաղաղութիւն ու ողորմութիւն բոլոր անոնց վրայ՝ որ այս կանոնին համաձայն կ'ընթանան, եւ Աստուծոյ Իսրայելին վրայ: 17 Ասկէ ետք ո՛չ մէկը թող անհանգստացնէ զիս. որովհետեւ ես մարմինիս վրայ կը կրեմ Տէր Յիսուսի վերքին սպիւները: 18 Եղբայրներ՛ր, մեր Տէրոջ՝ Յիսուս Բրիստոսի շնորհքը ձեր հոգիին հետ: Ամէն:

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 24.30-36

Մեր Տէրը Յիսուս Բրիստոս կ'ըսէ.-

30Եւ ա՛յն ատեն մարդու Որդիին նշանը պիտի երեւնայ երկինքի մէջ: Այն ատեն երկրի բոլոր տոհմերը պիտի հեծեծեն, ու պիտի տեսնեն մարդու Որդին՝ որ կու գայ երկինքի ամպերուն վրայ, զօրութեամբ ու մեծ փառքով: 31Եւ ան պիտի դրկէ իր հրեշտակները բարձրաձայն փողով, ու պիտի հաւաքեն իր ընտրեալները չորս հովերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը»:

32«Թգենի՛՛ն սորվեցէք առակ մը. երբ անոր ոստերը կակուղնան եւ տերեւները ցցուին՝ կը հասկնաք թէ ամառը մօտ է: 33Նո՛յնպէս դուք՝ երբ տեսնէք այս բոլոր բաները, գիտցէ՛ք թէ մօտ է՝ դռներուն քով: 34Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. «Այս սերունդը պիտի չանցնի, մինչեւ որ

այս բոլոր բաները ըլլան”։ 35Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնա՛ւ պիտի չանցնին»։

36«Իսկ այդ օրն ու ժամը՝ ո՛չ մէկ մարդ գիտէ, ո՛չ ալ երկինքի հրեշտակները, հապա՛ միայն իմ Հայրս։

Galates 6.14-18

14 Mais pour moi, à Dieu ne plaise que je me glorifie sinon en la croix de notre Seigneur Jésus-Christ, par lequel le monde m'est crucifié, et moi au monde! 15 Car en Jésus-Christ ni la Circoncision, ni le prépuce n'ont aucune efficace, mais la nouvelle créature. 16 Et à l'égard de tous ceux qui marcheront selon cette règle, que la paix et la miséricorde soient sur eux, et sur l'Israël de Dieu. 17Au reste, que personne ne me donne du chagrin; car je porte en mon corps les flétrissures du Seigneur Jésus. 18 Mes frères, que la grâce de notre Seigneur Jésus-Christ soit avec votre esprit; Amen!

Matthieu 24.30-36

30 Et alors le signe du Fils de l'homme paraîtra dans le ciel. Alors aussi toutes les Tribus de la terre se lamenteront en se frappant la poitrine, et verront le Fils de l'homme venant dans les nuées du ciel, avec [une grande] puissance, et une grande gloire. 31Et il enverra ses Anges, qui avec un grand son de trompette assembleront ses élus, des quatre vents, depuis l'un des bouts des cieux jusques à l'autre bout.

32 Or apprenez cette similitude prise du figuier : Quand ses branches sont déjà en sève, et qu'il pousse des feuilles, vous connaissez que l'été est proche. 33De même quand vous verrez toutes ces choses, sachez que [le Fils de l'homme] est proche, et qu'il est à la porte. 34 En vérité je vous dis, que cette génération ne passera point, que toutes ces choses ne soient arrivées. 35 Le ciel et la terre passeront, mais mes paroles ne passeront point.

36 Or quant à ce jour-là, et à l'heure, personne ne le sait; non pas même les Anges du ciel, mais mon Père seul.



Հոգեւոր Հովիւի Պատգամը

Իւրաքանչիւր տարի Սեպտեմբեր 25-ի մօտ Կիրակին, Հայոց Առաքելական Ս. Եկեղեցւոյ սրբազան կամարներուն տակ կ'ոգեկոչենք օրուան յատուկ հոգեզմայլ շարականներով եւ աստուածաշնչական պատշաճ ընթերցումներով մեր Եկեղեցւոյ տօնացոյցին մեջ խաչի խորհուրդին նուիրուած տօներէն՝ Վարազայ Սուրբ Խաչի տօնը:



Արդարեւ, տարուան ընթացքին երեք տարբեր առիթներով Հայոց Եկեղեցւոյ զաւակներս կը միացնենք, ի խորոց սրտի, հաւատքով եւ յոյսով արտասանուող մեր աղօթքներն ու հոգեպարար շարականները Քրիստոնէական եկեղեցիներու մեծ ընտանիքին: Առաջին հերթին՝ մտասեւեռելու խաչի խորհուրդին վրայ եւ ապա Խաչեալէն ստանալու իր պատգամները մեր ամէնօրեայ կեանքը իմաստաւորելու համար, որպէսզի սպառազինուած անոր հոգեւոր զէնքերով՝ մենք եւս կարենանք հաստատակամ քալել Հայոց Պատմութեան խաչի արիւնոտ ճամբէն:

Հակիրճ անդրադառնալով այդ տօներուն՝ ժամանակագրական կարգով նշենք, որ Ընդհանրական Եկեղեցւոյ հետ նախ կը տօնենք Գիւտ Խաչի՝ Կոստանդին կայսրի մօր՝ Զեդինէի միջոցով 327 թուականին Գողգոթայի աղբիւսներուն մեջէն Քրիստոսի իրական խաչափայտին գտնուելուն

յիշատակը: Ապա կը փառաբանենք Երուսաղէմի երկնակամարին վրայ՝ Գողգոթայի բարձունքէն մինչեւ Ձիթենեաց լեռ, Սուրբ Խաչին երեւման հրաշալի դէպքը: Վերջապէս, Խաչվերացի տօսին առիթով կը պանծացնենք 628 թուականին Քրիստոնէական աշխարհի սրբազնագոյն մասունքին՝ Քրիստոսի Խաչին գերութենէն ազատագրումը եւ դարձեալ յաղթականօրէն Երուսաղէմ տարուելու պատմական մեծ եղելութիւնը:

Սակայն այս երեք տարբեր առիթներով կատարուող Խաչի տօներէն անկախ, մեր եկեղեցին կը նշէ նաեւ Վարազայ Ս. Խաչին տօնը: Այս տօնը իր մէջ խտացնելով կրօնական եւ ազգային կրկնակ իմաստներ՝ ունի գուտ Յայկական նկարագիր: Անոր ոգեկոչումը այսօր մեզ կ'առաջնորդէ մեր ժողովուրդի պատմութեան ամենէն տագնապալից շրջաններէն մէկուն՝ եօթներորդ դարու կիսուն, երբ Յայաստան աշխարհը արդէն վերջնականօրէն ինկած էր Արաբներու լուծին տակ: Բայց այս տօսին կարեւորութիւնը անելի լաւ ըմբռնելու համար անհրաժեշտ է նախ հոգիի աչքերով փոխադրուիլ այն սրբավայրը՝ Վարագ լեռան կողերուն, ուրկէ ծնունդ առած է Յայկական Խաչին այս տօնը:

Մեր քերթողահայրը՝ Մովսէս Խորենացին կը պատմէ, որ երբ Գայեանէն եւ իր ընկերուհիները Յոռմեական կայսրութեան սահմաններէն ներս Քրիստոնէաներուն դէմ մղուող հալածանքներէն խոյս տալով՝ եկան Յայաստան, անոնցմէ Յռիփսիմէ կոյսը իր վիզէն կախուած ունէր Քրիստոսի իրական Խաչափայտէն մասունք մը, որ թրջուած էր Յիսուսի՝ Խաչին վրայ թափուած փրկարար արիւնով:

Իրենց ուղեւորութեան ընթացքին, երբ այս կոյսերը կը գտնուէին Վանի մօտակայ շրջանը եւ կը պատրաստուէին մեկնիլ Յայաստանի մայրաքաղաքը՝ Վաղարշապատ, Յռիփսիմէն իր վիզէն հանելով այդ մասունքը՝ պահեց տեղ մը այդ լեռան վրայ, որպէսզի իրենց հասնելիք որեւէ չարիքի պարագային այդ մասունքը՝ չվտանգուէր: Երկու քահանաներ, որ կը ճգնէին այդ լեռան քարայրներուն մէջ, յանձն առին անոր պահպանութեան պարտականութիւնը:

Ինչպէս Յայոց Քրիստոնէութեան դարձի պատմութենէն ծանօթ է մեզի, Յայոց Տրդատ Արքային օրով Վաղարշապատի մէջ այդ կոյսերուն կը սպասէին եղերական պատահարներ, որոնք պատճառ հանդիսացան, որ անոնք ի վերջոյ կնքեն իրենց կեանքը նահատակի լուսապսակներով՝ ամուր կառչած մնալով իրենց Քրիստոնէական հաւատքին:

Յատկանշելի է, որ անոնց աճիւնները մինչեւ այսօր պահպանուած են Յռիփսիմէի եւ Գայեանէի անուան նուիրուած եկեղեցիներուն մէջ: Յետագային, երբ այդ քահանաները եւս վախճանեցան, Յռիփսիմէին աւանդ թողած մասունքին վայրը նաեւ մոռացութեան ենթարկուեցաւ եւ անհետ կորսուեցաւ:

Այսուհանդերձ, Վանայ շրջանի ժողովուրդին յիշողութեան մէջ անջնջելիօրէն վառ մնաց այն գիտակցութիւնը, թէ Վարագայ լեռան վրայ, անծանօթ վայրի մը մէջ կը գտնուէր Քրիստոսի իսկական Խաչափայտէն:

կենարար մասնիկ մը: Ահա թէ ինչո՛ւ այս խաչի մասունքին սիրով այրող, անդիմադրելի հրապոյրով տեսլահար հոգիներուն համար Վարագայ լեռը սերունդներ շարունակ դարձաւ երկիւղած պաշտամունքի առանձնարան եւ աղօթաւայր: Ժամանակի ընթացքին այնտեղ շինուեցան ճգնաւորներու համար խրճիթներ, կառուցուեցան մատուռներ ու եկեղեցի, ուր սրբակրօն ու հաւատաւոր Հայ մենակեացներ ու վանականներ դարեր շարունակ ճգնեցան գիշեր ու ցերեկ, աղօթեցին եւ խոկացին՝ իրենց անթարթ աչքերը խաչի խորհուրդին սեւեռած:

Ահա նոյն այդ հաւատքին ամուր փարած երկու Հայ մենակեացներ՝ Թողիկ եւ Յովէլ, տարիներ առաջ հրաժարելով աշխարհէն, բարձրացած էին Վարագայ լեռ՝ շատ հաւանաբար հրապուրուած այդ լեռան գիրկը պահուած սրբազան գաղտնիքէն: Գաղտնիք, որ դարեր շարունակ անյայտ մնալէ ետք, անկասկած երջանիկ օր մը պիտի յայտնուէր՝ որպէս իմանալի լոյս, այն հոգիներուն, որոնք խաչեալին հասնելու տենչանքով տարիներ շարունակ կ'որոնէին Քրիստոսի իրական խաչափայտին այդ մասունքը:

Գիշեր մը, երբ Թողիկ ճգնաւոր եւ իր աշակերտը՝ Յովէլ կրկին Բարձրեալին առջեւ ծնրադրած կ'աղօթէին, հրաշալի տեսիլք մը իր լուսափայլ խորհուրդը պարզեց անոնց աչքերուն առջեւ ու անոնց հոգիները լեցուց երկնային այցելութեամբ... Այնտեղ՝ Վարագայ լեռան կատարին, ուր սեպածէն ժայռերը կարծէք կը հասնէին երկինքի աստղերուն, տասներկու լուսեղէն սիւներու վրայ բարձրացող հոյատեսիլ տաճար մը կանգնած էր եւ անոր մէջտեղը կ'երեւէր լուսասփիռ խաչ մը: Քիչ ետք ճառագայթող խաչի Ս. Նշանը փոխադրուեցաւ ցած՝ Վարագայ վանքին եկեղեցւոյ խորանին վրայ: Տարիներ շարունակ աստուածային այս յայտնութեան ակնկալութեամբ աղօթող ու տազնապող Հայ ճգնաւորներուն միտքերը պայծառացան եւ անմիջապէս անդրադարձան, թէ վերջապէս Աստուած լսած է իրենց պաղատագին աղօթքները: Կատարուած էր անոնց առ Աստուած մատուցած թախանձագին խնդրանքը:

Ուստի, փութալով, կ'իջնեն իրենց ճգնարաններէն վար եւ կը մտնեն եկեղեցի, ուր, ո՛վ հրաշք, իրապէս կը գտնեն խաչափայտի մասունքը խորանին վրայ՝ ճիշդ այնտեղ, ուր լուսեղէն խաչը հանգչած էր:

Երկրպագելէ ետք, այդ սուրբ Նշանին, փառաբանելով զԱստուած, անոնք դուրս կու գան եկեղեցիէն՝ ուրիշներ եւս տեղեակ պահելու այս ցնծալի եղելութեան մասին: Հրաշալի այս լուրը, աստուածային յայտնութեան այս աւետիսը կը հասնի Վան քաղաք եւ յաջորդող տասներկու օրերու ընթացքին ժողովուրդը խումբ առ խումբ բարձրանալով Վարագայ լեռ՝ այնտեղ ականատես կ'ըլլայ տասներկու սիւներով զարդարուած տեսիլքին եւ երկիւղածութեամբ կը խոնարհի սուրբ մասունքին առջեւ: Այս հրաշալի դէպքին արձագանգը շուտով կը տարածուի Վասպուրական նահանգի սահմաններէն անդին՝ առիթ ընծայելով համաժողովորային աննախընթաց ոգեւորութեան եւ կրօնական ցերմեռանդութեան: Մօտիկ ու հեռաւոր գիւղերէն՝ շէներէն, աւաններէն ու քաղաքներէն, հոգեւորական եւ աշխարհական, մեծահանդէս թափօրով ուխտի կու գան:

Վերջապես, օրուան Հայոց Հայրապետ Ներսես Գ. Շինող կաթողիկոսը, ընկերակցութեամբ երկրի սպարապետ Վարդ Ռշտունիին, իր շքախումբով կու գայ դէպքին վայրը՝ Վարագայ վանք եւ անձամբ ստուգելէ ետք, եղելութեան մանրամասնութիւնները, կը հաստատէ խաչափայտի մասունքին վաւերականութիւնը: Այդ առիթով կը կազմակերպէ յատուկ եկեղեցական հանդիսութիւն եւ հայրապետական իշխանութեամբ կը տնօրինէ, որ այնուհետեւ ամէն տարի մասնաւոր շուքով Նշուի Ս. Նշանի երեւման այդ օրը:

Իր ամփոփ գիծերուն մէջ ահա ա՛յս Է Վարագայ խաչի տօնին կրօնական ենթահողը: Սակայն, երբ փորձենք այս հրաշապատում դէպքը քննել եւ արժեւորել եօթներորդ դարու կեսին Հայաստանի մէջ տիրող քաղաքական ծանր կացութեան եւ կրօնական դժուարին պայմաններու շրջագիծին մէջ, մեզի համար շատ աւելի հասկնալի կը դառնայ, թէ ինչո՞ւ մեր ժողովուրդի կեանքին մէջ իւրայատուկ տեղ գրաւած Է ան, եւ անոր ընծայուած Է բացառիկ կարեւորութիւն:

Ներսես կաթողիկոս, գործակցութեամբ Հայոց Սպարապետ Թեոֆորոս Ռշտունիի հետ, առանց վիատելու, անմիջապէս լծուած էր երկրին ու ժողովուրդին արիւնոտ վերքերը դարմանելու սրբազան գործին: Ան իր առաջին նուիրական պարտականութիւնը կը համարէ Արաբներու ձեռքով Դուկիի մէջ սպաննուած եւ տակաւին քաղաքին եւ դաշտերուն մէջ ցիր ու ցան անթաղ մնացած հազարաւոր նահատակներուն մարմինները հաւաքել տալ եւ զանոնք արժանացնել պատշաճ կրօնական արարողութեան եւ հաւաքական թաղման: Այնուհետեւ անոնց աճիւններուն վրայ կը կառուցէ վկայարան-տաճար մը՝ Ս. Սարգիս անուանով:



Սակայն անոր անունը անմահացած Է մեր եկեղեցւոյ եւ ճարտարապետութեան պատմութեան էջերուն՝ Վաղարշապատի մէջ շինել տուած Ս. Գրիգոր Լուսաւորչի անուան նուիրուած հոյակապ տաճարով: Առիասարակ «Չուարթնոց» անունով ծանօթ այս եռայարկ, երբեմնի շքեղ եկեղեցւոյ աւերակներն իսկ այսօր կը վկայեն Հայ ժողովուրդի Քրիստոնէական ժայռարմատ հաւատքին մասին՝ հանդիսանալով անոր աստուածատենչ ու երկնալաց մտքին ու հոգիին հզօր խոյանքին գեղեցկագոյն արտայայտութիւններէն մէկը:



Արդարեւ, ինչպէ՞ս կարելի Է ըմբռնել փրկագործութեան խորհուրդը՝ առանց մեր նայուածքները սեւեռելու Գողգոթայի խաչէն անդին, խաչեալ Քրիստոսի դատարկ գերեզմանին, հրաշափառ յարութեան իրողութեան

վրայ: Ինչպէ՞ս կարելի է կարդալ խաչին խորհուրդը՝ առանց մեր միտքն ու հոգին բանալու՝ անխառն սիրոյ, նուիրումի եւ յոյսի, անագորոյն մահուան վրայ տարուած յաղթանակի եւ փառապանծ յարութեան խորհրդանիշ՝ Աստուածորդւոյն յոյս պատգամներուն:

Սակայն մեր հայրերը հաստատելով Վարագայ Ս. խաչի երեւման՝ Հայու սեփական խաչին տօնը, նախ իրենք վերստին զրահուեցան խաչեալ եւ յարուցեալ Փրկչին կենսատու հաւատքով. վերստին պայծառացան աստուածաշունչ մատենաներէն աւետուող անվախճան ուրախութեամբ եւ երկնային իմաստութեամբ:

Այնուհետեւ, խաչի նշանը վերածեցին ամէնօրեայ իրենց կեանքը ոռոգող, սնուցանող եւ պահպանող՝ անսահման սիրոյ, անսահման հաւատքի, անխորտակ կամքի եւ անսպառ ուժի աղբիւր:

Վերջապէս, պէտք չէ վախնալ պայթարէն, ցաւէն, տառապանքէն եւ մանաւանդ՝ մարմնաւոր մահէն, որովհետեւ մեր Տիրոջ անժամանցելի պատգամն է. «Մի՛ վախնաք անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն, բայց չեն կրնար հոգին սպաննել» (Մատթ. Ժ. 28), որովհետեւ Գողգոթայի խաչելութենէն եւ խաւարման գիշերէն ետքն է, որ միայն պիտի բացուի յարութեան լուսապայծառ եւ վարդահեղեղ առաւօտը:

Օրինութեամբ՝

Տէր Դաւիթ քահանայ Մարգարեան

Հոգեւոր Հովիւ

Message du pasteur,

Chaque année le dimanche 25 septembre, l'Église apostolique arménienne sous les arcades sacrées de l'église, nous commémorons la fête de la Sainte Croix à Varague, l'une des fêtes consacrées au sacrement de la Croix dans notre église, avec hymnes spirituels spéciaux et lectures bibliques appropriées.



En effet, à trois occasions différentes au cours de l'année, nous nous joignons aux fidèles de l'Église arménienne dans nos sincères prières, prières et hymnes à la grande famille des Églises chrétiennes. Tout d'abord, méditer sur le mystère de la croix et ensuite recevoir ses messages de la Croix pour donner un sens à notre vie quotidienne, afin qu'armés de ses armes spirituelles, nous puissions nous aussi marcher fermement sur le chemin sanglant de la Croix de

l'histoire arménienne. En parlant brièvement de ces jours fériés, mentionnons-les par ordre chronologique. Que nous, avec l'Église universelle, commémorons d'abord la découverte de la vraie croix du Christ dans les sources du Golgotha en 327, à travers Heghine, la mère de l'empereur Constantin, l'invention de la croix. Ensuite, nous glorifions la vue miraculeuse de la Sainte Croix sur le ciel de Jérusalem, de la hauteur du Golgotha au mont des Oliviers.

Enfin, à l'occasion de la Fête de la Croix, nous célébrons la relique la plus sacrée de la chrétienté en 628, la libération de la captivité de la croix du Christ et l'événement historique d'une procession triomphante à Jérusalem. Cependant, quelles que soient les fêtes de la croix célébrées à ces trois occasions différentes, notre église célèbre également Saint Varague. Fête de la Croix. Cette fête, avec sa double signification religieuse et nationale, a un caractère purement arménien. Son souvenir est avec nous aujourd'hui pour mener l'une des périodes les plus alarmantes de l'histoire de notre peuple, au milieu du VIIe siècle, lorsque le monde arménien était finalement tombé sous le joug des Arabes. Mais pour mieux comprendre l'importance de cette fête, il faut d'abord se déplacer avec les yeux de l'âme vers le sanctuaire sur les pentes du mont Varague, où est née cette fête de la croix arménienne.

Notre père historien, Movses Khorenatsi, nous raconte que lorsque Gayané et ses amis sont venus en Arménie pour échapper à la persécution des chrétiens au sein de l'Empire romain, ils sont venus en Arménie avec du sang. Au cours de leur voyage, alors que ces vierges se trouvaient aux alentours de Van et s'apprêtaient à partir pour la capitale de l'Arménie, Vagharshapat, Hripsime a enlevé la relique de son cou et a gardé une place sur la montagne afin que la relique ne soit pas en danger en cas de dommage. Deux prêtres qui erraient dans les grottes de cette montagne entreprirent de la garder.

Comme nous le savons par l'histoire de la conversion du christianisme arménien, le jour du roi arménien Trdat, des calamités attendaient ces vierges à Vagharshapat, ce qui les fit mettre fin à leurs jours avec les guirlandes du martyre, accrochées à leur identité chrétienne. Il est à noter que leurs restes sont encore conservés dans les églises dédiées à Hripsimé et Gayané. Plus tard, lorsque ces prêtres sont également morts, la place de la relique laissée par Hripsime a également été oubliée et a disparu. Néanmoins, les habitants de la région de Van sont conscients de manière indélébile du fait qu'une partie vivante de la vraie croix du Christ a été trouvée dans un endroit inconnu sur le mont Varaga.

C'est pourquoi le mont Varague est devenu un lieu de culte depuis des générations pour les âmes qui brûlent la relique de cette croix avec amour et la voient avec un charme irrésistible. Au fil du temps, des huttes ont été construites pour les ermites, des chapelles et une église ont été construites, où des moines et des moines arméniens pieux et dévots ont passé des siècles jour et nuit, à prier et à s'incliner, les yeux fixés sur la croix. Voici deux Arméniens solitaires, Todik et Hovel, qui, fermement enracinés dans la même foi, avaient

abandonné le monde il y a des années et escaladé le mont Varague, très probablement fascinés par le secret sacré caché dans cette montagne.

Secret, qu'après avoir été inconnu pendant des siècles, un jour heureux apparaîtrait sûrement comme une lumière connue aux âmes qui, pendant des années, aspirant à atteindre le Crucifié, cherchaient depuis des années cette relique de la vraie croix du Christ. Une nuit, alors que l'ermite Todik et son disciple, Hovel, étaient à genoux avant de prier devant le Très-Haut, une merveilleuse vision a dévoilé son glorieux mystère sous leurs yeux et a rempli leurs âmes d'une visite céleste. Dans les étoiles du ciel se dressait un temple magnifique s'élevant sur douze piliers de lumière, et au milieu se trouvait une croix brillante. Peu de temps après, la croix rayonnante de Saint. Le signe a été porté à l'autel de l'église du monastère de Varaga.

Pendant des années, les esprits des ermites arméniens qui ont prié et pleuré en prévision de cette révélation divine ont été éclairés, et ils ont immédiatement réalisé que Dieu avait finalement entendu leurs supplications. Leur supplication à Dieu a été accomplie. Alors, à la hâte, ils descendent de leurs ermitages et entrent dans l'église, où, oh miracle, ils trouvent vraiment la relique de la croix sur le tabernacle, là où reposait la croix de la lumière. Après avoir adoré ce signe sacré, glorifiant Dieu, ils quittent l'église pour informer les autres de cet événement joyeux. Cette merveilleuse nouvelle, cet évangile de la révélation divine, atteint la ville de Van, et pendant les douze jours suivants, les gens montent en groupes vers le mont Varague, où ils en sont témoins. Il est orné de dix ou deux piliers et arcs devant la sainte relique avec admiration. La réponse à ce merveilleux événement s'est rapidement étendue au-delà des frontières de la province de Vaspurakan, suscitant un enthousiasme populaire et une ferveur religieuse sans précédent.

Des gens de près et de loin, des villages, des villes et des villes, venez au pèlerinage d'une manière séculière de grande qualité. Enfin, le patriarche arménien du jour Nerses 3-ème Le Catholicos Dayetzi, accompagné du commandant du pays Vard Rshuni, arrive sur les lieux avec son entourage, le monastère de Varague, et après avoir personnellement vérifié les détails de l'incident, confirme la validité de la croix relique. A cette occasion, il organise une cérémonie religieuse spéciale et la gère avec l'autorité patriarcale, de sorte que chaque année saint. Dans ses lignes concises, c'est le fond religieux de la Fête de la Croix de Varague. Cependant, lorsque nous essayons d'examiner et d'évaluer ce miracle dans le contexte de la situation politique difficile en Arménie au milieu du VIIe siècle et des conditions religieuses difficiles, il devient beaucoup plus clair pour nous pourquoi il occupe une place particulière dans la vie de notre peuple. Et on lui donne une importance exceptionnelle. Catholicos Nerses, en collaboration avec le commandant arménien Théodore Rshuni, s'est immédiatement engagé dans la tâche sacrée de guérir les blessures sanglantes du pays et du peuple.

Il considère qu'il est de son premier devoir sacré de collecter les corps des milliers de martyrs qui ont été tués par les ennemis et qui sont encore dispersés

dans la ville et dans les champs, et de les valoriser lors d'une cérémonie religieuse appropriée et d'un enterrement de masse. Puis il a construit un temple-témoignage sur leurs restes. Son nom est Sarkis. Cependant, son nom est immortalisé dans les pages de l'histoire de notre église et de notre architecture, l'église qu'il a construite à Vagharshapat. Avec un magnifique temple dédié à Saint Grégoire l'Illuminateur. Connu comme " Ils furent de nouveau éclairés par la joie sans fin et la sagesse céleste annoncées par les livres de Dieu.

Ensuite, ils ont fait du signe de la croix une source d'amour infini, de foi infinie, de volonté indestructible et de force inépuisable qui irrigue, nourrit et soutient leur vie quotidienne.

Enfin, nous ne devons pas avoir peur de la lutte, de la douleur, de la souffrance et surtout de la mort physique, car c'est le message inaliénable de notre Seigneur. "Ne craignez pas ceux qui tuent le corps, mais ne sont pas capables de tuer l'âme" (Matt. 10:28), car c'est après la crucifixion du Golgotha et la nuit des ténèbres, qui ne s'ouvriront que sur le brillant et le rose matin de la résurrection.

Avec mes bénédictions
Père David Margaryan
Prêtre Paroissial



Խաչ մատուցրով, 18-րդ դար:

ԿԱՐԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Արդեօք Գիտեի՞ք թե.-

Ո՞վ հաստատած է այս խորհուրդը:

Ս. Մկրտության կենդանարար խորհուրդը հաստատեց Յիսուս Քրիստոս հրաշափառ Յարութենէն ետք, երբ առաքելներու պատուիրեց. **«Գացէ՛ք ուրեմս, աշակերտ դարցուցէք բոլոր ազգերուն, մկրտեցէ՛ք անոնց Յօրը, Որդիին եւ Ս. Հոգիին անունով»** (Մատթ. 28.19): Տիրոջ այս խօսքերէն յետոյ Ս. Մկրտութիւնը արդէն խորհուրդ է բոլոր անոնց համար, որոնք կը ցանկան փրկուիլ եւ երկինքի արքայութեան արժանանալ՝ զինուորագրուելով Քրիստոսի Ս. Եկեղեցոյ: Յիսուս իր այս խօսքերուն նաեւ ակեցուց. **«Ով հաւատայ եւ մկրտուի, պիտի փրկուի, իսկ ով չհաւատայ, պիտի դատապարտուի»:** (Մարկ. 16.16): Իսկ Ս. Մկրտութեան հոգեւոր նշանկութեան մասին յիսուս շատ յստակ կը խօսի Նիկողեմսոսին հետ զրոյցի ընթացքին: Երբ վերջինս զարմացած հարցուց, թէ ինչպի՛ս կրնայ ծեր մարդը նորէն ծնիլ, Տէրը անոր ըսաւ. **«Ճմարիտ, ճմարիտ կ'ըսեմ քեզ, եթէ մէկը ջուրէն եւ հոգիէն չծնի, չի կրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ հոգիէն ծնածը՝ հոգի»:** (Յովհ. 3.5-6):

Ինչն՞ է Ս. Մկրտութեան խորհուրդը կ'անուանուի վերստին ծնունդ:

Մարդ, առաջին անգամ ծնելով իր մարմնաւոր ծնողներէն, իբրեւ հին մարդ՝ կը ստանայ նախահօր՝ առաջին Ադամի պատկերը, բայց վերստին ծնելով Եկեղեցոյ Ս. Աւագանէն՝ **«ջուրէն եւ հոգիէն»**՝ իբրեւ նոր մարդ՝ երկրորդ Ադամին՝ Քրիստոսին պատկերը: Վերստին ծնունդի կարեւորութեան մասին կը խօսի նաեւ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս: Երբ փարիսեցի Նիկողեմսոսը զիջերով կ'այցելէ Անոր, Յիսուս անոր հետ կը խօսի մկրտուելուկարեւորութեան մասի՝ ըսելով. **«Ճմարիտ, ճմարիտ կ'ըսեմ քեզ, եթէ մէկը ջուրէն եւ հոգիէն չծնի, չկրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ հոգիէն ծնածը՝ հոգի: Դուս մի՛ զարմանար, որ քեզի ըսի՝ պետք է ձեզի վերստին ծնիլ, որովհետեւ քամին ուր ուզէ կը փչէ, եւ անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր ուրկէ կու գայ կամ ուր կ'երթայ. Այսպէս է եւ ամէն մէկը, որ հոգիէն ծնած է»** (Յոհ. 3.5-8): Իսկ Պօղոս առաքելը այսպէս կը բացատրէ հոգեւոր ծնունդը. **«ժամանակ մը մենք ալ անմիտ էինք, անհնազանդ, մոլորուած, կը ծառայէինք ցանկութիւններու եւ պէս-պէս անառակութիւններու. Չարութեամբ եւ նախանծով կ'ապրէինք, ատելի էինք եւ կ'ատէինք իրար: Իսկ երբ մեր Փրկիչ Աստուծոյ քաղցրութիւնը եւ մարդասիրութիւնը յայտնուեցաւ,- ոչ այն արդարութեան գործերուն համար, որ մենք ըրինք, այլ իր ողորմութեան համաձայն,- փրկեց մեզ վերստին ծննդեան Աւագանի միջոցով եւ նորոգութեամբ Ս. Հոգիին»** (Տիմ. 3.3-5): Վերստին ծննդեամբ՝ Ս. Մկրտութեամբ, մարդ կ'ուխտէ թողել իր հին կեանքը եւ այսուհետեւ ապրիլ նորը Քրիստոսով, ուր մեղքին դէմ անդադար պայթար է՝ յանուն երկինքի արքայութեան ժառանգման:



ՈՒՍԱՆՈՂԻ ԱՐՕԹՔ

Արարիչ անճառելի եւ արբիր ճշմարիտ լոյսի ու
ինաստութեան, լուսաւորէ իմ միտքս պայծառութեան
Նշոյլով եւ մաքրէ իմ մէջէն անգիտութեան խաւարը:

Դո՛ւն, որ մանուկ երեխաներու լեզուներուն մէջ
պարզախօսութիւն կը դնես, վարժեցուր իմ լեզուիս
եւ Զու շնորհներուդ օրհնութեամբ լեցուր
շրթուքներս:

Տո՛ւր զօրութիւն ճանչնալու, ընդունակութիւն՝
պահելու, կորովամտութիւն՝ մեկնաբանելու,
դիւրընկալութիւն՝ ուսանելու,

ինչպէս նաև՝ առատապէս շնորհախօսելու:

Պատրաստէ ու հարդարէ իմ մուտքս (այս կեանք),
ուղղէ ընթացքս եւ աւարտին հասցուր
կեանքս իմ դէպի Զրիստոս Յիսուս՝ Տէրը: Ամէն:

STUDENT PRAYER

Creator of inexhaustible and source of true light and
wisdom, enlighten my mind with the sign of
enlightenment and cleanse the darkness
of ignorance within me.

You, who put simplicity into the tongues of young
children, practice my tongue and fill my lips with the
blessing of Thy graces.

Give me strength to recognize, ability to keep,
energized mind to interpret, perception to learn,
as well as graceful speaking abundantly.

Prepare and arrange my entry (this life), direct my
course, and bring my life to Christ Jesus,
the Lord, at the end. Amen.

Շաբաթ, 26 Սեպտեմբեր 2020

Տօն Ս. Գեորգ Չորավարի

Սուրբ Գեորգ (280-303) հռչակաւոր կապաղովկիացի ազնուական, զօրավար եւ հազարապետ, Քրիստոսի քաջամարտիկ մարտիրոս, արի նահատակ եւ մարտիրոսներու պարծանքի թագը:



Անգլիոյ պաշտպան Գեորգ զօրավար ծնած է Կապաղովկիոյ Մաժակ քաղաքին մօտ (այժմ Կեսարիա) քրիստոնեայ ընտանիքի մը մէջ: Ապրած է Դիոկղետանոս եւ Մաքսիմիանոս կայսրերու օրով: Մանկութիւնը անցուցած է Պաղեստին, ուր ծնողքը բազմաթիւ կալուածներ ունէին: Չափահաս դառնալով, կը զինուորագրուի հռոմեական բանակին եւ կարճ ժամանակ ետք իր ցուցաբերած քաջութեան ու հաւատարմութեան շնորհիւ, կ'արժանանայ հազարապետութեան աստիճանին, երբ հազիւ երեսուն տարեկան էր ու կը դառնայ խորհրդականը Դիոկղետիանոս կայսրին:

Երբ Դիոկղետիանոս քրիստոնեաներուն դէմ հալածանքի հրովարտակը պիտի հրապարակէր, նախ խորհուրդը կը հարցնէ իր զօրավարներուն, որոնցմէ էր նաեւ Գեորգ:

Վերջինս, հաւատացեալ քրիստոնեայ ըլլալով, դէմ կը դնէ կայսրին եւ կը փորձէ համոզել զայն, որ այդպիսի հրովարտակով մը չխանգարէ կայսրութեան քաղաքացիներուն անդդորութիւնը: Սակայն կայսրն ու զօրավարները կը հասկնան, թէ Գեորգ արդէն իսկ քրիստոնեայ է եւ կը փորձէ դարձի բերել զիրենք, ուստի ուրացութեան կը հրաւիրեն զինք եւ բազմաթիւ չարչարանքներու կ'ենթարկեն, որոնց քաջութեամբ կը դիմանայ:

Ի վերջոյ, Գեորգ կը յայտնէ կայսրին թէ կը փափաքի տեսնել կուռքերը: Կայսրը խանդավառ այս ինդրանքէն, կը տանի Գեորգը մեհեան մը, այն սպսումով թէ ան պիտի երկրպագէ կուռքերուն: Սակայն Գեորգ ջարդ ու փշուր կ'ընէ կուռքերը: Կայսրը անմիջապէս գլխատել կու տայ քաջ զօրավարը, որ իր արիւնը կը հեղուի փառս Աստուծոյ 303-ին:

Ս. Գեորգի հանրայայտ սրբապատկերը

Ս. Գեորգի հանրայայտ սրբապատկերը, ուր ան ձիու վրայ նստած՝ նիզակով վիշապը կը խոցէ, իր իւրայատուկ խորհրդանիշը ունի, որ կը նշանակէ քրիստոնեական հաւատքով չարի դէմ պայքարը եւ յաղթանակը:



Ս. Գեորգի մասին աւանդութիւնը կը պատմէ, թէ ան վիշապ մը սպաննած է՝ աղջկայ մը կեանքը փրկելով, որ իբրեւ կերակուր յանձնուած էր անոր: Այս աւանդութիւնը կը խորհրդանշէ Ս. զօրավարին արիասիրտ պատերազմը եւ յաղթանակը սատանայէն: Բացի ատկէ՝ Դիոկղետիանոսը նոյնպէս անդնդային վիշապ կը կոչէին, որու կը յաղթէ Ս. Գեորգ իր անսասան հաւատքով:

Ս. Գեորգի Նահատակութենէն Ետք

Ս. Գեորգի մատուքէն՝ Մատերիա կղզիին մէջ, Փորթուկալ

